

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրեցիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն շաբաթ:

Յայտարարութիւնները համար վճարում են յայտարարողը
խաւաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ 1878 թ. փ

ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒՄ Է ԼՄՆԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէն:
Իրաւորի դիրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԼԿԱՆ ՀԵՌԵՐԻՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ:
ԼՄՆԵՆ ՀԵՐԵՐԻՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը: Օտար քաղաքներէն պէտք է ղրկուի հետեւեալ հասցեով՝ ТИФЛИСЬ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻՒԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը—Ներքին տեսչութիւնը, Նախկին Արաւելաբարի, Նախկին Բազմաբնակչութեան, Նախկին Կրթութեան, Արտաքին տեսչութիւնը, Տրանսպորտի, Անգլիայի, Նախկին Փրօքիայի, Արտաքին տեսչութեան, Նախկին Լուսին, «Մշակի» հեղինակները:—Յայտարարութիւնները:—Տեղեկացումներ:

ԲԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՅՔԵՐԸ

Լմողը աշխարհը կօնգրէսի վերջնական յետոյ այդ ժողովից իր աչքերը դարձրեց դրա վճիռների իրագործվելու վրա:

Լատրիացի-գործերից Բանիայի գրաւելը կօնգրէսի հետեւներէն մէկն է: Լատրիացիների առաջ գնալուն մի կողմից արգելում են Բանիայի մահմեդական բնակիչները, միւս կողմից թուրքաց ապստամբ գործերը, միւս կողմից էլ թուրքիայի և Լատրիայի մէջ եղած դիպլոմատական յարաբերութիւնները:

Բնթերցողն յայտնի է, որ կօնգրէսը չորոշեց թէ որքան ժամանակ աւտորիական գործերը պէտք է մնան Բանիայի և Հերցեգովինայի մէջ: Նորերում միայն այդպիսի հարց առաջարկեց թուրքաց կառավարութիւնը Լատրիային: Դարաթէօրի-փաշայի միջնորդութեամբ: Բացի այս թուրքաց լիազօրը հրաման ստացաւ թողնել Լատրիայի մայրաքաղաքը:

Լրագիրները լուր են տարածել իր թէ Լատրիան մերժեց

որոշել Բանիայի և Հերցեգովինայի գրաւելու ժամանակամիջոցը և աւտորիական ղեսպան կոմս Օլիւ թողեց Կ. Պօլս, ղեսպանատան գործերը մի հաւատարմատարի յանձնելով:

Լնցեալ շաբաթվայ մեր տեսութեան մէջ ասել էինք, որ թէ ռուսաց մամուլը և թէ հատորական կարծիքը բաւական անհանգիստ էին լինում այն ռուս գործերի համար որոնք պէտք է մնային թուրքիայում: Եւ թէ մամուլը և թէ հասարակական կարծիքը բաւական հանգստացել են, որովհետեւ ինչպէս հաղորդեց մեզ այս շաբաթվայ հեղինակներէն մէկը, ռուսաց գործերի հրամանատարը յայտնեց Բ. Դրանը, որ ռուսաց գործերը չեն հեռանայ Կ. Պօլսի տակից մինչև Բաթում և միւս բերդերը չը յանձնվեն ռուսներին, իսկ սուլթանը արգէն հրամայեց մարքել Բաթում:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԱՐԱՆԻՔԱՆԱԿԻՑ

29 յուլիսի

Արաւելաբար քաղաքը գտնվում է ծովի մակերևոյթից վեց հազար ֆուտ բարձրութեան վրա: Նա ունի մօտ վեց հարիւր տուն բնակիչներ, որոնք բացառութեամբ մի քանի տուն Արաւելաբարի գաղթած հրէաների, լուսաւորչական հայեր են:

Բնակիչները պարագում են վաճառականութեամբ և արհեստագործութեամբ: Արաւելաբար չը շապատում է մի ընդարձակ դաշտ, որ

հիւսիսից սահման ունի «Յիւսէ—ձվարի» սարերը, որոնց շարունակութիւնը տարածվելով չը շապատում են նրան և արևելքից, արևմուտքից, կուր. դեպի ձորը խրվելով մօտ, հարաւ արևելակողմից (չը հաշվելով մի քանի փոքրիկ բարձրութիւններ) Մատթափայ սարերը և հարաւից Չլոր սարերը, և այդպէս Արաւելաբարի դաշտը ունի 650 քառակուսի վերստ տարածութիւն: Այդ դաշտի վրա, բացառութեամբ կուր. գետի ձորում և Սամար սարի զառիվայրի վրա բնակվողները, կան 81 գիւղեր, որոնց 45-ի բնակիչները հայեր են, 4-ինը վրացիներ, 17-ին թուրքամասներ, 7-ին խաւն թուրքեր և հայեր և վերջապէս 8-ի մէջ ռուս-գուկարներ: Գիւղացիք ընդհանրապէս պարագում են երկրագործութեամբ և խոտաւէտ տեղեկրում անասնապահութեամբ:

Բարձր դիրքի պատճառով կլիման ամառը բարեխառն, իսկ ձմեռը սաստիկ ցուրտ է: Մանաւանդ մեր գաւառի ամենաբարձր կետերի վրա գտնված գուկարների գիւղերի բարձրութիւնը (6,800 ֆուտ է) որտեղ բացառութեամբ 1—2 գիւղերի, ցորեն չէ բուսնում մնացեալ գիւղերում: մինչև անգամ դարին ևս յաճախ զոհ է դառնում ցրտերին, որ տուում է սեպտեմբերի սկիզբներից մինչև ապրիլի և շատ անգամ մայիսի վերջերը:

Գաւառի մնացած տեղերում առատութեամբ բուսնում են ցորեն, դարի, հաճար, կտաւատ և այլն, իսկ բանջարեղէններից և մրգեղէններից—որոնք զիւտաւորապէս բուսնում են կուր. գետի ձորում, որ մի քանի հարիւրաչափ ֆուտ ցած է Արաւելաբարի մակերևոյթից—կարտօֆիլ, լոբի, վարունգ, տանձ, խնձոր, կեռաս, դեղձ, խաղող, և այլն: Այդ գործութիւնը քուրդերի, թուրքերի և մասամբ վրացիների ձեռքին է: Մեր գաւառի թուրքերը ըստ մեծի մասին թուրքացած վրացիներ են, որ կարելի է նշմարել նրանում, որ նրանք չունեն այն այլանդակ տեղեկութիւնը որ յատուկ է մանգոլական ցեղերին: Արաւելաբարի գաւառում կան 5 մեծ և մի քանի աննշան լճեր, որոնց երեքը այն է թափարավանի, թուամակեօլի և Թապաղաղուրի մէջ որտու են տեսակ տեսակ ձկներ, օրինակ կարմրախայտ, լուրջ, մուրձա և այլն, մանաւանդ թափարաղուր լճում որի մէջ կան միայն կարմրախայտ ձկներ և զանազանվում են միւսներից թէ համեղութեամբ և թէ խոշորութեամբ: Գաւառի շատ սարերի վրա գտնվում են ամրոցների և վանքերի հիւղեր: Ամենքին յայտնի է որ մի ժամանակ երբ մեր կողմերը յաղթակութիւնների և արիւնհեղութեան ասպարէզ էին դարձած, երբ մարդու կեանքը և ունեցածը ոչնչով ապահոված չէին, բնակաւաքը նա պէտք է ամրոցներ չէին և իր ապահովութիւնը հարկաւոր ժամանակ որոնէր նրանց մէջ, բայց ժողովուրդը որ ամեն մի բանի անուն է պալիս իր հասկացողութեան և հաճոյքի համեմատ, քեօր-Օղլուն է վերաբերում դրանց հիմարութիւնը: Վերև եւ յիշեցի որ սարերի վրա կան և վանքերի հիւղեր, աւերակներ: դրանց ուխտ է գնում ժողովուրդը տարվայ որոշեալ ժամանակներում: Մի քանի ուխտաւորներ բաղկանում են միայն մի քարակոյտից որի մէջ լինում է մի խաչաքար միայն: Աւանդութիւններ այդ սրբերի մասին չը կան, բայց այնուամենայնիւ ժողովուրդը գիտէ և անուանում է այդ սրբերին սուրբ Յովհաննէս, սուրբ Գէորգ և այլն: Գծաբարութիւն չը կայ դրանում, ինքն սուրբը երազի մէջ երևում և յայտնում է նրանց իր անունը:

Գլխաւոր ուխտաւորներից մինը Բուռնաչէթի կեղեցիկն է, որի արդիւնքից տարեկան 200 ռուբլ ստանում է քաղաքիս ուսումնարանը:

Գաւառի մէջ պալատ էն և ինքնակոյ բովիներ, որոնց մեծ մասը գնաւազան միջոցներով խաւում են պարագմիտ գիւղացուն և իրանց զբոսանքը հաստատում են: Այդ կան և մի քանի հոգիներ և մարմնաւոր բովիները՝ քահանաներ որոնք աւետարան և Նարեկ կարդալով հիւանդների վրա բռնվում են նրանց... Զարմանալին այն է որ դուկարները անգամ որոնք սաստիկ ատում

են քահանաներին և խորհում ջրիտոնեաներից այս դէպքում՝ ընդուն են իրանց փրկանքների քահանաների մօտ բռնվելու համար: Գիւղացիների տները առ հասարակ—բացառութեամբ մի քանիսի—գետնափոր են և մեծ փողեր են միսովում դրանց շինութեան համար որովհետեւ փայտերի մի անագին քանակութիւն է հարկաւոր որը անտառի հեռաւորութիւնը պատճառով թանկ է: Գնահատելու Նոյնը բնակիչները յարկի տու մանասնների դրամում: Նրա մի կողմ չինած, ապա ուր մէջ:

Չմեղվայ քմիւնները անց են կացնում ամբողջութեան մէջ՝ երեկոները հաւաքելու են միմիկամ միւսի գովին սաքուն և սկիզբնում միատմել հեղաթններ: Գլխաւորապէս այդ հեղաթնների նիւթերը լինում են սիրանաբլիթեան և քանձեր: գտնելու վրա: Այդ միջոցին գիւղացիք աչքերը փայլում են անհրաժեշտ կրակով և նրա երեսի գծագրութիւնը փայլում են նրանց փիկոսի գծագրութիւնը: Կարծիքի յարաբերութեամբ է անակնկալ կերպով յարաբերել իր զոհի վրա: «Ախ, —ասում է նա՝ երբեմն պէտք է կայ գանձերը իմը լինեն, ինչքան ջոխաւեղ կը զնէի, միւսը միւսից քան է վրա թերում և այդպէս իւրաքանչիւրը իր երկամայրութեան մէջ չինում է օրային ամրոցներ և միայն հեղաթնի վերջնական յետոյ նա արթնանում է և տեսնում որ բոլորը միայն քաղաքներից էին թաղած գանձերը միայն նպատակած հեղաթնները կամ առակները յատուկ են միայն մի ծոյր տղա-գովից, ինչպէս և մեր փրկագունը որ ապարանկ պառկած ժամանակ երազում է գիւղացիները դառնալ:

Որքան մեծ գործունեութեան ասպարէզ է բացված մի ուսումնական և խելացի քահանայի համար: Նա յարգում է գիւղի մէջ իբրեւ մի բարձր էակ և խելացի ու ուսման քահանա օրուտ քաղեալ ժողովրդի վրա՝ անաշխարած անգործութեանց կարող էր փոխանակ այդ հեղաթններին պառկել ժողովրդի հաստատանքի աղակով: պատմութիւն, բացառութեամբ անմիաբանութեան և երկպառակութեան առաջացրած վնասները, որոնք պատճառ դարձան մեր ազգի քաղաքական կեանքը վրոյնեղու: Նմանապէս կարող էր տեղեկութիւններ հաղորդել գիւղատնտեսական զանազան հիւղերը լրաբնակացնելու մասին, բայց ժողովուրդը նրանց գիտութեան խորը անհաւատակութիւնը չէ լինում ժողովրդի փրկանքի մոլորեցումներից և շատ անգամ վատ օրինակ են տալիս ժողովրդին:

Կանոնաւոր դպրոցներ մի քանի գիւղերում կան, միայն միւս գիւղերում էլ ձմեռվայ 5—6 ամիսը ուսուցանում են կամ գիւղի քահանան կամ ինքնակոյ ուսուցիչներ: դրանց ուսուցածը լինում է Նարեկ, Աւետարան և Ստոյն: Մեր գաւառի մէջ բնակվում են ինչպէս յիշեցի դուկարները դրանք զետեղված են ուղի գիւղերում և բաղկանում են 500 տներէն:

Շատերը հետաքրքրվում են տեղեկանալ Դուկարների կեանքին և աղանդին: Գրանք ընդունվում են ուսումնականութիւնը և քանի անգամ որ տեղեկութիւն տաւարկել է ուսումնարան հիմնել, բացասել են: Միտութիւն չունեն, խոստովանվում և հարդրվում չեն «հոգին որ մշտապէս բնակվում է մեր մէջ, օրը և մեզ մեղքերից» ասում են նրանք: Ամուսնութիւնը կատարում են այսպէս. երբ տղայի և աղջկա ծնողները համաձայնում են միմեանց հետ, որ չեալ օր հաւաքվում են ազգականները և սկսում են ուրախութիւն անել:

Նրա ժողովրդի և պար չեն վերում որովհետեւ արգելված է աղանդից: միայն երբեք են միակեղ պղանակով և թիւային հնչիւններով հոգեւոր սաղմոսներ և այդպէս ներկայութեան հանդիսականաց և նրանց օրհնութեամբ կատարվում է դրանց միութիւնը: Շատ աշխատաւոր ժողովուրդ են: պարագում են անասնապահութեամբ, երկրագործութեամբ և ֆուրգոցիկութեամբ: Նրանք հնազանդ են կառավարութեան հրամանների ճշգրտութեամբ կատարելու: Գողութիւնը

որ մի ժամանակ չը կար բողոքովին, այժմ ըսկ-
սում է նշմարել դեռահասների մէջ:

Իրանց աղանդի սկզբունքն մասին հաստա-
տամտութեամբ լուծմ են օտարների առաջ:

Երբ նշմարում են թէ մի հիւանդ վատ դրու-
թեան մէջն է գտնվում, հաւաքվում են ազգա-
կանները և պատրաստում են իրանց անհրա-
ժեշտ պիտոյքը — արաղը: Հիւանդի մեռնելուց
յետոյ մի խումբ երկու սեռից հաւաքվում են
և երգում են սաղմոսներ: Երբ արդէն դա-
գաղը պատրաստ է լինում, մեռածին դնում են
մէջը և տանում են թաղելու: Մի քանի իրանց
հնարած օրհնութիւններ և սաղմոսներ ասելով
նրանք թաղում են դիակը և վերադառնում
են տուն, որտեղ ճաշ անելուց և մեռնողի հո-
գուն արքայութիւն ցանկանալով, բաժակներ
մաքրելուց յետոյ, աշխատաւորները ստանում
են իւրեւ յիշատակ 20—40 կոպ. կամ մի մի երես
արբիչ և ցրվում են տները:

Գրանց մէջ երկու սեռի հաւատարմութիւն կայ,
կիրք իր սիրտուց յետ է մնում աշխատանքնե-
րից և առհասարակ նրա օգնականն է: մինչև
անգամ կարելի է տեսնել որ դրանց մէջ այդ մար-
դիկը գտնվում են կանանց անմիջական ազդե-
ցութեան տակ:

Մեր մարդիկ առհասարակ երբ ծերանում են,
այլ ևս չեն աշխատում և միայն որդիներանց աշ-
խատանքով են ապրում, բայց այդպէս չէ նը-
րանց մէջ: Երեւակայեցէք մի ուղիորդական
ծերունի, որ ունի 3—4 որդիներ, 10—20 հա-
զար բուրդ կարողութիւն, նրա աչքերը դժուա-
րութեամբ են որոշում թիւը որ նա աշխատում է
անցկացնել առողի միջով մուշտակ կտրելու և մի
քանի կոպէկ ձեռք բերելու համար: Երբ դուք
ասում էք նրան «փող ունե՞ս, որդիքդ աշխա-
տում են ամեն մի բանում, հարկաւորութիւն
չունենա, ուրեմն ինչն է հարկաւորում քեզ աշխա-
տելու», նա վաղի կը տայ: ձեռք վրա արհամար-
հական կերպով և կը պատասխանէ. «Արդարեւ
ես ոչ մի բանի պակասութիւն չունեմ, բայց
չեմ ուզում ձանձրութիւն դառնալ եւ որդիկե-
րանցս և թոռներս, այնպէս որ նրանք իմ մեռ-
նելիս ազատված համարեն իրանց մի անպիտան
բեռից»: Նա ապրում է առանց ձանձրութիւն
տալու նրանց և մինչև անգամ օգնում է նրանց
իր կարողութեան չափ: Գարեկա գիւղում բնակ-
վում է դրանց աղանդի հիմնադրի վերջին սե-
րունդի կինը որ բաւականին նշանաւոր յարգանք
է վայելում ժողովրդից և մեծ ազդեցութիւն
ունի նրանց ամեն մի գործերի վրա: Կա ունի
մեծ հարստութիւն և դուրսաբերներն ևս սակա-
ւագէտ և աշխատասէր լինելով կարողացան—
մանաւանդ ներկայ պատերազմի ժամանակ—մեծ
գումարներ դիզել: Հետաքրքրելի է դրանց ա-
ղանդի հանգանակը որ 110 հարց ու պատաս-
խաններից է բաղկացած օրին ամենայն զգուշու-
թեամբ ծածուկ են պահում օտարազգիներէն:

Իրանց աշխատել են եկեղեցական անօթնե-
րին և պարագաներին տալ իրանց կամեցածի հա-
մեմատ բացատրութիւններ:

Օրինակի համար մէջ եմ բերում մի քանիսը
որոնք մտքումս պահել եմ:

- Ի՞նչ է մեռնելը:
- Մեռնելը առաքելութիւնն է: զոհամտութիւն
- Ի՞նչն է մէջ է պահվում նա:
- Այժի եղջիւրի մէջ:
- Ի՞նչ է այժի եղջիւրը:
- Աստուծո ցեղը:
- Ի՞նչ է բուրվաւոր:
- Բուրվաւոր բարեգործութիւնն է:
- Երբ որ չը կար ոչ երկինքը և ոչ երկիրը,
ոչ լուսնի ընթացքը և ոչ երկնքի զարդերը, այն
ժամանակ օրտեղ էր Աստուծո:
- Սարի հաւատում (въ горной вѣрѣ):

Ի՞նչ Մառանկողեանց

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻԹՅ

29 յուլիսի

Մի տարուց աւելի է, որ այստեղ ևս դպրոցա-
կան խնդիրը գծաթուփեան խնձոր էր դարձել:
Վարդապետ Ստեփանէի ընդունակութեան և
անընդունակութեան շնորհով վէճեր և տարա-
ձայնութիւններ անդադար յուզում էին միաբան
ժողովրդին: Երկարատեւութիւնը մտաւ և առա-
ջաւորները կամ փողաւորները երկու բաժան-
վեցան: մի կողմը, որ իսկապէս վարդապետի
զաւու պատճառ էր և որը սկիզբներում գրեթէ
նրան պաշտում էր և երկինք բարձրացնում, ա-
մեն օր բազմաթիւ փաստեր և իրողութիւններ

տեսնելով չուտով խոտովանցել իր մոլորու-
թիւնը և ցանկանում էր որ և ինչ կերպով ուղ-
ղել կամ անվնաս կացուցանել իր արած սխալը,
իսկ միւս կողմը ոտի կանգնեց յանկարծ և ասաց.
«Այցեք, պարոններ, դուք մեռակ սխալվել էք
և կամեցում էք ինքնազուլու ուղղվել: այդ կա-
րելի չէ, այժմ հերթը մերն է և մենք մի մեծա-
գոյն սխալով պէտք է պատժենք ձեզ: Ձեր առած-
ները ուղիղ են, մենք ևս տեսնում ենք, բայց
այս մարդը բարձր ուսում և դիպում ունի, մենք
կամաւորապէս պիտի սխալվենք և պաշտպա-
նենք նրան մինչև վերջին թիւը, որովհետեւ սրա
գործերը չլացնում են մեր աչքերը և խօսքերը
հասնողներում մեր ականջները»: Վարդապետը
այդ նորակազմ բանակը միտի դէմ դնելով հիւս-
ցած էր իր ճարտիկութեան վրա, կարծելով թէ
այնքան պաշտպաններով ինքը արդէն ապահո-
ված է և կարող է ազատօրէն բանացնել նրանց
իւրեւ լաւ գործիքներ: Վէճերը սաստկացան ու
աւելի բարդվեցան: Վերջը երբ մասնւր մէջ
մտաւ և հարցը բողոքովին պարզեց, շատերը
աչքերը բացել և ճշմարտութեան առաջին տեղի
տալով իսպառ հեռացան նրանից: Բայց կամա-
ւորապէս սխալվողներից մի քանիսը դեռ հա-
ւատարիմ իրանց դրօշակին, նախկին ընթացքն
էին չարունակում: Վերջապէս յուլիսի 12-ին
հայր Ստեփանէ վեհափառի թողութեամբ
գնաց Մոսկով, այնտեղից Էլմիածին ուղևորվե-
լու նպատակով: Թէ ինչպէս և ինչու գնաց յան-
կարծակի՞ աւելորդ եմ համարում մանրամասն
գրել: Էլմիածինը պահանջեց և գնաց այլ ևս
չը վերադառնալ ու որոշմամբ Այս բաւա-
կան է փանի օր առաջ լսվում էր, իբր թէ ոմանք
մտադիր են վեհափառից հրաման խնդրել, վար-
դապետին կրկին յետ բերելու և իրանց հայտով
ջիգրու պահել այստեղ, իբրեւ մասնաւոր դըպ-
րոցի կառավարիչ, բայց չեմ կարծում, թէ պա-
րոնները այնքան մեծ ծայրայեղութեան հասցե-
ներ իրանց սխալը, որը այնու ամենայնիւ գլուխ
զայու բան չէ:

Երբ բազմաթիւ են հայր Ստեփանէի ան-
ցեալը, Բագու գաղը, գտած ընդունակութիւնը,
բնածն ընթացքը և գնալը տխուր մտածողու-
թիւններ տիրում են մարդուն: Ամեն տեղ ժողո-
վուրդը ծարաւ է ուսման համար, մարդիկ է որո-
շում, իսկական մշակներ և առաջնորդներ է կան-
չում: Մի կերպով գտնվում են, բայց մեծ մա-
սամբ չեն պէտք գալիս, այնքան համբերութիւն,
տակտ և հեռաւորութիւն չեն ունենում, որ հան-
գամանքների համեմատ գործ կատարեն և պը-
տուղ տան: Ո՞վ է մեղաւորը—ժողովուրդը՞ թէ
առաջնորդները, եւ կարծում եմ, որ վերջիններս
որովհետեւ սրանք այնպիսի դերեր են յանձն առ-
նում, որոնց կատարելը իրանց կարողութիւնից
վեր է: Մարդս ամեն բանի ընդունակ լինել կա-
րող չէ, բայց իւրաքանչիւրը մի որ և ինչ կոչման
պատշաճ է լինում, և երանի այն մարդուն, ով
այնքան բարեխղճ է, որ հասարակական գոր-
ծերում միայն իր ընկալն և յարմար դերն է
ընտրում: Հ. Ստեփանէի մասին խօսելով չենք
կարող չը խոստովանել, որ նա մի շատ ընդու-
նակ մարդ է, բաւական ուսման և հմտութեան
պատշաճ ունի, բայց պաշտօնները ընտրելով
մինչև այժմ նա սաստիկ սխալվել է, դանցա-
ռութիւններ է արել և վնասել թէ իրան և թէ
ժողովրդին: Շատ ցանկալի է, որ գտնէ այսու-
հետեւ նա այնպիսի անպարբէր ընտրել, ուր կա-
րողանք իր հմտութիւնները պտղաբեր անել և
բարոյապէս հանգիստ լինել: Մանկավարժի
դաստիարակի դերը հայր Ստեփանէի վրա ձեռն
չէ, նրա համար իսպառ անընդունակ և խորթ է,
ուստի և խորհուրդ ենք տալիս հայ հասարա-
կութիւններին այդ ծանր պաշտօնը այլ ևս չը
յանձնել նրան, եթէ չեն կամեցում, որ այն օգ-
տակար մարդը միշտ վէճերով և աղմուկներով
զբաղվի ու վերջի վերջոյ անօգուտ մնալ ազգի
համար: Մեզ ամեն տեսակ մարդիկ հարկաւոր են,
մանաւանդ այժմ, երբ նորանոր հանգամանքնե-
րով չըլայապատկեցաւ ազգի վիճակը: ուրեմն գի-
տեմանք և աշխատենք օգուտ քաղել այս հոգեւո-
րականի տա օրինակ ընդունակութեան
նից, միայն թէ երբեք չը թողնենք, որ նա դաս-
տիարակութեան գործի հետ անմիջական յարա-
բերութիւններ ունենայ: Այս է անհ մեր խո-
րին համոզմունքը սրա մասին:

Հ. Ստեփանէին գնաց և նրա պաշտօնները
պարագայով մնացին,— Շամախու թիւի և Բագուի
դպրոցների վերատեսչութիւնը, որոնցից մին
քան միւսը ծանրակշիւ է: Առաջին պաշտօնի
համար կը յուսանք, որ սրբազան Թադէոս եպիս-
կոպոսը աշխատէ չուտով մի յարմարաւոր անձն
ձգելու, որը անխնամ թողված բազմաթիւ գիւ-

ղերի կրթութեան հոգսը անէր: Իսկ երկրորդի
համար, ինչպէս լուծմ ենք, արդէն մասնում են
մարդ հրաւիրելու ամենամօտիկ ապագայում
թողնելով մեր դեկաւարներին իրանց տեսակէ-
տից (որը, պէտք է խոստովանել, շատ անգամ
սխալ և խախտում է լինում) նայելու այս գոր-
ծին և ուզած մարդը հրաւիրելու, եւ մի քանի
խօսք կասեմ այն անձին, ով կը յօժարի հայր
Ստեփանէին յաջորդել այստեղ: Բագուն մի նոր
քաղաք է: Հայերը օրից օր բազմանում են այս-
տեղ: Նկող մարդը երկու սեռի դպրոցներին տե-
սուչ է լինելու, իսկ հարուստների որդոց հա-
մար նա մասնաւոր մի դպրոց կունենայ, որից
կը ստանայ առատ վարձատրութիւն, փող կայ,
սպարաններ կան, ուսման և մտաւոր զարգաց-
ման անյազելի ծարաւ կայ: երիտաքարդներ կան
որոնք կարող են օգտակար մի խումբ դառնալ,
կենտրոն ունենալ և մինչև անգամ ժամանակով
զաւառական մի թերթ հրատարակել: Առաջա-
դիմութեան համար ամեն միջոցներ կան, միայն
մի առաջնորդ պէտք է, որ կապ և ներդաշնա-
կութիւն ձգէ այս ցրված գործութիւններին մէջ
և կենդանացնէ նրանց: Առաջվայ միաբան ժողո-
վուրդը վերջին ժամանակներս բաւական երկպա-
ռակված է և ունանց ճաշակը կրթութեան վերա-
բերութեամբ փչացած: եկող անձը պէտք է
ունենայ հիմնաւոր գիտութիւն, անձնութիւն, մեծ
տակտ և համբերութիւն, որ կարողանայ
իր հեղինակութեամբ (որը մեծ նշանակութիւն
ունի այստեղ) բաժանվածներին շարկապել, միաց-
նել և գործ առաջացնել: Ուստի ով կամե-
նում է Բագու գալ՝ նախ թող անձնաքննութեան
մի հանդէս կատարէ և ապա իր յօժարութիւնը
տայ: Նի՞է նա հեղինակութիւն, բարձրա-
գոյն ուսում և կրթութիւն չունի, եթէ չէ կարող
ժողովրդին ճշմարիտ դաստիարակ և մշակ հան-
դիսանալ: ապա լաւ է որ բողոքովին չը գայ,
որովհետեւ ծածկված կիրքերը նորից կարծարվեն
և հին յարդը կրկին քամու կը տրվի: Իսկ այնու-
հետեւ գործել և օգուտ բերել անհնարին կը դառ-
նայ:

0.

ՆԱՄԱԿ ԱԼԷԳՈՒՆԳՐԱՊՈԼԻՅ

20 յուլիսի

Չանազան ժամանակներում պատահել է ինձ
Ձաջուռ անունով գիւղը գնալ, որ գտնվում է
Ալէքսանդրապոլից զրեթէ 7 վերստ հեռաւո-
րութեամբ:

Ձաջուռ գիւղը գեղեցիկ դաշտավայրի վրա է
և 170 տուն հայ բնակիչներ ունի:

Համեմատելով գաւառի գիւղերի հետ, այս-
տեղի վրայը ամենից առատ է, սառն և առող-
ջարար:

Ձաջուռ, անցեալ 1877 թւից առաջ, նշանա-
ւոր ուխտատեղիներից մէկն էր, ուր վարդապե-
տին, Աստուածածնի և այլ սոն օրերում, Ալէք-
սանդրապոլի և ըստ մեծի մասին նորա չըլա-
կայ գիւղերից եկած ժողովրդով լցվում էր:

Այստեղի եկեղեցին մարաբի նմանութեամբ
մի մեծ շինութիւն է, որ դռան երկու կողմերի
խաչարձաններով և նրանց հանդէպ բարձր փայ-
տերի միջից քաջ տուած զանգակներով եկեղեցի
լինելը կը ճանաչվի: ձեղունը հաստ գերաններով
է ծածկված: Թէ որքան ներսի կողմը դրսին
համեմատն է, այդ սաեւու խօսք չը կայ,
որովհետեւ երբեմն շտեմարանի, մարաբի և այլ
բանի տեղ էլ է ծառայում: Շատ անգամ ներս
մտնելու պէս, ձեռք աչքերին կը հանդիպեն մի
անկիւնում գաբի դիզված, միւսում ցորեն, ձիւթի
կարասներ և այլն: Գայտի սիւները տեղ—տեղ
զարդարված են նախուհ թղթերով, «Արարատ»
ամսագրի թերթերով, և ծխախոտի արկղերի
գոյնգոյն թղթերով, որոնց երբեմն հայ կանայք
սրբոց պատկերի և գրուածքի տեղ ընդունելով
համարում են: Սեղանի պատկերները շատ կեղ-
տոտ են:

Այս գիւղում երկու քահանայներ կան, որոնցից
մէկը գրեթէ 80—85 տարեկան ծերունի, իր
գործքով և գիտութեամբ շատերին ծանօթ Տէր-
Մէլն է:

Պատմում են, որ սրա ձեռնադրութեան ժամա-
նակ, իրտուն բուրբուլ կաշառված քնիւն եպիսկո-
պոսի հարցմանը, թէ «Պիղաւոս ո՞վ էր պատառ-
խանում է դժուարութեամբ. «Վալանձ չիմե՞ս, կի-
նիակ ըսիմ, կը պոնաթօր ըսիմ, մօկոս ըսիմ...
հանտայ հըմալ մէ բան էր»:

Սա գիտէ սուտ ու սխալ կարգաւ և դժուա-
րութեամբ իր անունը ստորագրել:

Երկրորդ քահանան Տէր-Մէլի տիրացուներից
մէկն է: Ամեն իրաւունք նրան է յանձնած որ-
պէս հատկացող և քահանայական պարտաւորու-
թիւնները լաւ իմացող անձին:

Սրանց ժամասացութիւնը շատ անկանոն է:
Ձաջուռցիք բաւականի ունեւոր մարդիկ են
և Մուշ գաւառի գաղթականներ:

Լաւ քահանայի և քարոզչի շնորհով սրանք
ուսումնարան չունեն: Բարեկամիս մէկը, որ մի
անգամ Տէր Մէլի քարոզին ներկայ եղած էր՝
հետեւեալն է պատմում. «Մեծ պատի սկզբի կի-
րակի օրն էր, պատահամբ եկեղեցի մտայ: Ձեռ-
մեռանդ ժողովուրդը ծոնկ չըթած քահանայի
քարոզն էր լսում, որ կոչոյ մատնեցող դաժնած մի-
րուքը չիւելով խօսում էր «չէ օխնածներ, մենք
լէ սէֆիլ ինք, ձեր տեղ մզի կու տանեն զգա-
խիւ: Գաւեցէք մեղքերի, պատարագ տուէք,
խոնկ, մոմ, զատուած պաշտութիւն, ժամուց,
խաչիսմբուր, իրուցու պատիւ իմցէք, տանորդ
տուէք, օրդա մենք լէ ձեր մեղաց թողութիւն
ի տանք... և այլն»: Նրան փող է հարկաւոր, իսկ
եկեղեցուն խոնկ ու մոմ... և ոչ թէ ժողովրդին
անօգուտ ուսում քարոզել:

Այս գիւղը առաջինը չէ, որ այսպիսի հոգեւոր
հովիւներ ունէ: Ալէքսանդրապոլի չըլականերում
այդպիսի գիւղեր շատ կան:

Կ. Յ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՉԱՐԿԱԽԼՈՒԻՅ մեզ գրում են. «Այնտեղ
մշակները շատ թանկ են: Խոտը հնձելու հա-
մար իւրաքանչիւր մշակ, բացի ուտելիքից որը
ստանում էր 1 ր.—1 ր. 20 կ., իսկ այժմ երբ
հունձը սկսված է, բացի հացից, մի կամ երկու
օրավարի համար, իբրեւ կերակուր ստանում են
մէկ գաւու և իւրաքանչիւր 20 խրճին 4, շա-
տերն էլ 5 խուրճ վարձ, բացի դրանց 8 բուրդ
փող էլ են ստանում նրանք: Շատ արտառէր
թանկ գնով էլ մշակ չը գտնելով մնացել է յու-
սահատված, մինչդեռ առաջին տարիներում մը-
շակները իրանք էին խնդրում: Խոտի հնձելու
ժամանակ օրէնը ամենաշատը ստանում էին
60—80 կ., իսկ հնձին, իւրաքանչիւր 20 խուրճի
համար ստանում էին 3 խուրճ և փողով հունձ
ամենին չը կար: Այստեղ ծաղիկ հիւանդու-
թիւնը բաւական գոհն է տանում: Այդ հիւան-
դութեամբ վարակիւորներից շատ աննշան մասն
է առողջանում»:

ՉԱՐԿԱԽԼՈՒԻՅ մեզ գրում են, որ ամսիս
19-ին, Գեղարեցի պղնձեայ հանքի գործարա-
նում զազախեցի մի հայ մշակ մեքենաների մէջ
ընկնելով, վախճանվել է:

Մի և նոյն տեղից մեզ հաղորդում են, որ
յուլիսի առաջին կէսում պատահած սարսա-
փելի կարկուտի պատճառով դուխաբօրների
Սլաւախկա գիւղում ամենին հունձ չը կար:

Խնդրում ենք մեր բաժանորդներից նրանց,
որոնք վճարել են միայն 7 բուրդ, հասցնել խըմ-
բադրութեանը մնացած 3 բուրդ մինչև օգոս-
տոսի վերջը: Չը վճարողներին սեպտեմբերից
կը դադարեցնենք ուղարկել «Մշակի» համալր-
ները: Կը դադարեցնենք նոյնպէս այն բաժա-
նորդներին, որոնք գրվել են, բայց մինչև այժմ
չեն վճարել 10 բուրդ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԲԱՆՍԻԱ

Մշակների գործադուլը երկար տևողութիւն
չի ունենայ. շատերը սկսել են համաձայնվել
և աշխատել:

Պօլ-Լուի Կուրիէին արձան կանգնեցրել են
Վերէկում, այդ ազատամիտ զրադէտի հայ-
րենիքում: Հանդէսը շատ շքեղ է կատարվել:
Պ. պ. Էլմոն Աբու, Լէօն Բրոն և Փիլ Սի-
մոն Ճաուեր խօսել են: Ժողովրդի մեծ բազ-
մութիւն հաւաքվել է: Պատգամաւոր պ. Բէլ
որ Տուրի քաղաքապետն է, գովեստի մի ճառ
խօսեցել է Կուրիէի համար շոր նեղութիւն-
ներ կրեց ազատութեան սիրոյ համար, թեր

ևս մինչև իր մահը՝ նա գտնվել է և ազատական մամուլին որ հետևում է նրա օրինակին։ Այդ օրը քաղաքում լուսավառութիւններ են եղել։

Պաշտպանական կուսակցութիւններին չաջողվեցաւ վերականգնել իրանց միութեան կենտրոնական մասնաժողովը, որովհետեւ ամեն կուսակցութիւններն էլ անվտանգ են իրար վրա։ Լեզիստիկաների օրգանը, Լիսի «Decentralisation» լրագիրը, հակառակվում է այդպիսի մասնաժողովի կազմութեան, նա չէ կարծում որ համաձայնութիւն կայանայ բոնապարտականների, լեզիստիկաների և այլ պաշտպանական կուսակցութիւնների մէջ։ Այդպիսի միութիւնը, կարծում է որ կը կաշկանդէ իւրաքանչիւր կուսակցութեան ձգտումները և ոչ մինչև թոյլ չի տայ աջողվել իր պլանների մէջ։ Մասնաժողովը մի անգամ նիստ է արել և որոշել է անորոշութիւն բանալով փող հաւաքել, աշխատելու համար հանրապետական կանգիդատների ընտրութիւնները աջողեցնելու։ Բայց այս անգամ Ձայնը չհասնում անտուկները դատարկացած են և Բոչիդները և այլ հարուստ սեղանաւորները երեւի թէ չեն կամենում լինել այդ դատարկ սնուկները։

Մարտի յոթ գրում են որ այդ քաղաքի նաւահանգստի և Կիպրոս կղզու մէջ յարաբերութիւնները շատացել են։ Messageries Maritimes-ի ընկերութիւնը կանոնաւոր երթևեկութիւնը հաստատել է Մարտի յոթ, Ալեքսանդրիայի, Լարնակայի (Կիպրոս կղզի) և Բէյրութի մէջ, դրա համար մասնաւոր շոգենաւեր յատկացնելով։ Նաւադնացութեան ուղի ընկերութիւններն էլ պատրաստվում են կանոնաւոր երթևեկութիւններ հաստատել Կիպրոս կղզու և Մարտի յոթ մէջ։ Թէ ճանապարհորդներ շատացել են և թէ շատ վաճառքներ ուղարկվում են։

ԱՆԳՆԻՍ

Համայնքների խորհրդարանում յուլիսի 30-ին, պ. Կլադսոն երկու և կէս ժամ խօսել է, սաստիկ յարձակվելով անգլո-թիւրքաց դաշնադրութեան և ընդհանրապէս Բիկոնսֆիլդի քաղաքականութեան վրա։ Մինիստրներից երկուսը, պ. պ. Սանդոն և Կրոսս, Կլադսոնի խիստ յարձակումների դէմ պաշտպանել են կառավարութեան։

Յուլիսի 29-ի նստում, ազատականների պարագլուխ լորդ Հարտինգտոն նոյնպէս երկար մի ճառ խօսել է անգլո-թիւրքաց դաշնադրութեան դէմ։ Հարտինգտոն լորդ Դէրբիի նման ճարտար խօսքերով բացատրում է այդ դաշնադրութեան վտանգները որ Անգլիային բերում է Ռուսաստանի մօտ և կանգնեցնում է նրա հանդէպ։ Անգլիան այդ դաշնադրութեամբ պարտաւորվում է կամ իր վրա առնել Թիւրքիայի կատարեալ վերանորոգութեան գործը կամ պատասխանատու լինել Թիւրքաց կառավարութեան գործած բոլոր սխալների համար։

Լորդ Հարտինգտոնի ճառը տարբերվում է լորդ Դէրբիի ճառից նրանով որ լորդ Հարտինգտոն աշխատել է անգլո-թիւրքաց դաշնադրութեան տնօրինական անկանոնութիւնները ցոյց տալ աւելի քան թէ նրա գործնական վտանգաւոր հետեւանքները։ Հարտինգտոն էլ լորդ Դէրբիի նման զօրաւոր փաստերով ցոյց է տալիս թէ չէ կարելի Անգլիայի համար այն իշխանութիւնը ունենալ Թիւրքական Ասիայում ինչ որ ունեցաւ Հնդկաստանում։

Հնդկաստանում, ասում է, մեզ հաւաստաւոր զինուորական տէրութիւն չը կայ, բայց Փաքը Ասիայում ոչ միայն ազդեցութիւն և հիւպատոսներ ունեն եւրոպական մեծ տէրութիւնները, այլ և Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի համեմատ, դուք իրաւունք եք

տված ստորագրող տէրութիւններին որ տնտեսական և ստուգելի թէ այդ երկրի լուսավարվելու համար խոստացված վերանորոգութիւնները գործադրված են։ Ինչպէս կը վարվէք եթէ ապստամբութիւն ծագի այդ երկրի մէջ։ Դուք խոստացել էք Թիւրքիային պաշտպանել եթէ Ռուսաստանի կողմից յարձակում լինի։ Բայց մի թէ Թիւրքիայում սովորութիւն եղած չէ որ ապստամբութիւններ սկսվին առաջ քան թէ այդպիսի յարձակումները։ Ուզում էք Թիւրքիային պաշտպանել Ասիայում ապստամբութիւնների դէմ, վատ կառավարութեան հետեւանքների դէմ, ուզում էք անգլիացի զօրքեր գործածել նրա ներքին ապստամբութիւնների դէմ կաւելու համար։ Զննարիտ, ոչ մի կառավարութիւն այդչափ թեթեւութեամբ չէ ընդունել իր վրա այդպիսի պարտաւորութիւններ, ինչպէս ընդունեց մեր կառավարութիւնը։ Մենք պէտք է հասկանցե՞նք սուլթանին թէ իր բաղդը նրանում է որ լուսավարի իր հպատակներին, մենք կարող էինք ասել նրան թէ այլ ևս խօսք չենք ուզում, մեզ գործ է հարկաւոր։ Եթէ Թիւրքիան ոչ թէ խօսք, այլ գործ ցոյց տար մեզ իր խոստացած վերանորոգութիւնները գործադրէր Փաքը-Ասիայի նահանգներում, այն ժամանակ մենք կարող էինք օգնել նրան և պաշտպանել որ և իցէ յարձակման դէմ։

Լորդ Բիկոնսֆիլդ իր ճառի մէջ վերաւորող խօսքեր խօսած լինելով պ. Կլադսոնի դէմ, լորդ Գրանվիլ լորդերի խորհրդարանում և մարկիզ Հարտինգտոն համայնքների խորհրդարանում բողոքեցին լորդ Բիկոնսֆիլդի այդ խօսքերի դէմ։ Մինչև անգամ լորդ Բիկոնսֆիլդի քաղաքականութիւնը պաշտպանող լրագիրներից մի քանիսը մեղադրում են նրա խիստ խօսքերը պ. Կլադսոնի նման մի երեւել անձի դէմ։

Վիկտորիա թագուհին ճնշակապի պատուանշանը շնորհել է դուքս Կլարքսոնին որ իր ազգականներից է և անգլիական զօրաբանակի գլխաւոր հրամանատար է։

ՆԱՄՍԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 24 յուլիս 78

Պատգամաւորներէն ոչ մին դեռ վերադարձած չէ Կ. Պոլիս։ Կասեն թէ խորէն սրբազան հիւանդացած պարկած է Փարիզ. առողջացածին պէս կը վերադառնայ Պետերբուրգ և կը մնայ այնտեղ երկու շաբաթի չափ, ինչպէս որ Ս. Պատրիարքն հեռագրով պատուիրած է։ Հայ պատգամաւորներու խնդիրն առաքաժողովէն մերժվել է յետոյ, մի տեսակ յուսահատութիւն տիրեց այստեղ. այժմ նոր յոյսեր տարածելով աշխատելու պատրաստուիլ ուղղորդելու թիւը սկսած է շատանալ։ Բայց հայ էֆէնտիներու դատակարարին դէմ շատ զրգում է։ Կեռ չեմ ուզեր շտապել և վճռապէս ասել թէ էֆէնտիներու դէմ այդ զրգումները և բարկութիւնը մինչև որ աստիճան արդար կամ անարգար է։ Ազգային ժողովը կը դուստարու և մինչդեռ մէկ ամիս յառաջ սիրով կը գրկէին զիբար, այսօր, ցաւալի է ասել, կրից ասպարէզի դռներ նորէն կը բացուին։ Երեսփոխաններէն ոմանք, երեւ թէ ազգի յոյսերուն ապարդիւն ելնելուն վրա սաստիկ վշտացած, կը համարին թէ ազգային շահերուն դաւաճանութիւնն եղած է։ Լրագիրներուն մէջ կը կարդաք յուլիս 21-ի ուրբաթ աւուր ազգային ժողովի նստի նկարագրութիւնը։

Զէյթուն ի դէն դիմած է. ահա մեր նոր լուր։ Թիւրքաց լրագիրները հրատարակեցին թէ Զէյթունի հայեր ի դէն դիմած, կայրին Թիւրքաց զիւղեր, Հայաց թերթերն ալ պատասխանեցին թէ հայեր չեն այրեր Թիւրքաց զիւղեր, այլ զիրենք կը պաշտպանեն չէրկէններու դէմ որոնց թիւը խիստ շատցած է այժմ այն կողմեր և կառավարութիւնն ալ ինչ տուր որ պէտք է առնէ, նրա եռապատիկը կը պահանջէ, և ժողովուրդը դէմքով կը դիմարէ։ Շարաթ օր (յուլիս 22) Թիւրքաց թերթերը հրատարակեցին թէ Մարաշի կառավարիչ փաշայէն հեռագիր եկած

է Բ. Դուռը թէ Զէյթունի հայեր յետ քաշուեցան։

Անհամբեր կը սպասենք իմանալ թէ ինչ պիտի լինի, ինչ աստիճանի բան է այդ ապստամբութիւնը. յոյս կնչ այն կողմէն. բայց երեւ թէ ամեն կերպով կաշխատին ծածուկ պահել. որոշ և ստացդ տեղեկութիւններ չենք կարող ստանալ. ուր դիտել, կառավարութիւնը արդեօք ինչպիսի գործեր կը լեցունէ այժմ այն կողմեր։ Գիտէք որ Զէյթունէն այստեղ ոչ փոստ կայ, ոչ ալ կանոնաւոր յարաբերութեան միջոցներ կան։

Մուշէն, Սեբաստիայէն տուր լուրեր կը հասնին. կառավարութիւնը ժողովուրդէն բոլոր տուրքերը հաւաքելէ յետոյ, ապագայ երեք տարիներու տուրքերն ալ այժմէն կանխիկ կը պահանջէ. ժողովուրդը յուսահատուած է. անցեալ շաբաթ բազմաթիւ մշցիներ եկան այստեղ. արտաճմլիկ եղելութիւններ կը պատմեն։ Ժողովուրդը մի փարա վճարել կարող չէ. ստիպուած են ծախել իւրեանց ճիւղեր, բայց գնող չը կայ։

Հ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

— Մասնաւոր նամակով մեզ հաղորդում են Էրզրումից, որ Անգլիան համաձայնութեամբ Թիւրքիայի հետ, թէ և խոստացել է կազմել հայերից և թուրքերից տեղական միլիցիա Հայաստանում, բայց այժմ Վանի, Գիարեթիւրի և Էրզնզանի վիճակներում զինաւորում է կատարելագործված զենքերով միայն թուրքերին, իսկ հայերին մի դէնք անգամ չէ տալիս։ Հայերը երկուդի մէջ են։

— «Донск. Печел» լրագրին գրում են Էրզրումից որ այնտեղի հայերը յոյս ունեն թէ Ռուսաստանը սաստիկ կը հսկէ որ խոստացած վերանորոգութիւնները ճշգրտեամբ մտցնվեն Հայաստանում և հարկաւոր ժամանակ ճնշում կը ներգործէ Բ. Գրան վրա։

— Լրագիրներին հեռագրում են, որ օգոստոսի 7-ին լորդ Բիկոնսֆիլդ և մարկիզ Սալիսբուրին ընդունեցին ամբողջ երկրի պահպանողական կուսակցութեան բազմաթիւ պատգամաւորներին, որոնց շնորհաւորութիւններին նոքա պատասխանեցին թէ պէտք է ոյծ տալ պահպանողական կուսակցութեանը Անգլիայի հօգուտը օտարների առաջ պահպանելու համար։

— «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ Շոմլայի բնակիչներից 5000 մահմետական ընտանիքներ զիտաւորութիւն ունեն գաղթել մի այլ տեղ։ Ռուսները շարունակում են բանակցութիւններ Բօթոպիան ապստամբների հետ։

— «Հիւրի հեռագրական ընկերութիւնը» հաղորդում է, որ յայտնի առաջնորդ Պէկօ Պալլօվիչ ընդունեց Հէրցեգովինայի ապստամբների հրամանատարութիւնը։

ԽԱՌՆ ԼԻՐՈՆԵՐ

«Донск. Печел» ռուս լրագրին գրում են Էրզրումից, որ այնտեղ կազմվել է հայ թատրոնաւէրների խումբը որ ներկայացումներ է տալիս մայրենի լեզուով։ Հայերը շատ են յաճախում այդ ներկայացումները։

Զմիւռնիայից ստացանք մի յայտարարութիւն ապված Փրանսիերէն լեզուով, որից երեւում է թէ Զմիւռնիայում կազմվելու է մի ընկերութիւն որ պէտք է հրատարակի ուսումնական գրքեր հայոց լեզուով։ Առ այժմ հրատարակված է արդէն առաջին հատորը այդ գրքերի, որոնց ամբողջ հրատարակութիւնը կանուանվի «Արեւելեան գիտական մատենադար»։ Յայտարարութիւնը ստորագրված է Գ. Կոստանեանց։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 62 Կ., երկրորդ 96 ր. 37 Կ., երրորդ 96 ր. 12 Կ., չորրորդ 95 ր. 75 Կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 235 ր. երկրորդ 235 ր. 50 Կ., արեւելեան 95 ր. 50 Կ., ոսկի 7 ր. 88 Կ.։ Տրամադրուելուն խիստ հանգիստ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 օգոստոսի։ Այսօր առաւօտ Միքայէլեան հրապարակի վրա զգանելու ժամանակ ժանդարմների չէֆ գեներալ Մեզենցիվ խանջալով վտանգաւոր կերպով վերաւորված է։ Չարագործները երկու անգամ ատորձանակ արձակելուց յետոյ կառքով անհետացան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 օգոստոսի։ Այսօր ժամի 5-ին ստացած վէրքից վախճանվեցաւ ժանդարմների չէֆ գեներալ Նիկօլայ Վլադիմիրովիչ Մեզենցիվ։

ՎԻԵՆԱ, 1/13 օգոստոսի։ «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ ռուսաց զվարդիայի Օդեսա ուղարկել պէտք է սկսվի օգոստոսի 7-ին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 օգոստոսի։ Պետական բանկի 100 տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 50 Կ., երկրորդ 96 3/8 ր., երրորդ 96 3/8 ր., չորրորդ 95 7/8 ր., ներքին 100 առաջին փոխառութեան տոմսակը արժէ 136 ր., երկրորդ 235 ր., արեւելեան 95 5/8 ր., ոսկին 7 ր. 86.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25 պէնս, ռուսաց 100 ր. Գերմանիայի վրա արժէ 215 մարկ 50 Ֆէլդի, Փարիզի վրա 264 Ֆրանկ 50 սանտ։ Տրամադրութիւնը ամուր է։

ԼՕՆԴՈՆ, 3/25 օգոստոսի։ «Morning Post» լրագիրը հաղորդում է, որ վերջնականապէս վճռված է չարձակել պարլամենտը։ «Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ ռուսաց դեսպան Լօբանով-Րօստօվիկի օրերում մի շրջաբերական ներկայացրեց Բ. Դրան, որտեղ ասված է, թէ ռուսաց զօրքերի մեծ մասը օրերում կը հեռանայ Կ. Պոլսի տակից։ Զօրքերի նաւերի վրա նրստեցնել կը սկսվի եկող շաբաթվայ առաջին օրերում։

Կ. ՊՈԼԻՍ, 2/14 օգոստոսի։ Այսօր Բ. Դուռը ուղարկեց արտասահմանի իր ներկայացուցիչներին մի հեռագիր Յունաց խնդրի վերաբերութեամբ, որ հերքում է Դելանիսի յիշատակագրի մէջ բերված ապացոյցները և բացատրում է յունաց կառավարութեան ձգտումները։

ԼՕՆԴՈՆ, 4/16 օգոստոսի։ Բ. Դրան և Աւստրիայի մէջ դաշնադրութիւն է կապված։ Աւստրիան կամենում էր կանոնաւորել երկիրների գրաւելը շրջաբերականների փոխարինութեամբ, բայց ի նկատի ունելով բօնիացիների ընդդիմադրութիւնը նշանաւոր գեշուներ արաւ։ Երկրների գրաւելը որոշված չէ։ Դաշնադրութեան շատ յօդուածներով խոստովանվում է սուլթանի բարձր իրաւունքները Բօնիայի և Հերցեգովինայի վրա։

ԲԵԼԳԻՍ, 3/15 օգոստոսի։ Սերբիան կենտրոնացնում է զօրքերը Դրինա գետի վրա։ Արնաուտեան ազգաբնակչութիւնը միանում է բօնիացի ապստամբների հետ։

ԲԵՐԼԻՆ, 4/16 օգոստոսի։ Այսօր վաղ առաւօտը Հէօգէլ զինաւորված է բերդի բաւկում։

ԼՕՆԴՈՆ, 4/16 օգոստոսի։ Այսօր փակվեց պարլամենտի նիստերի շրջանը։ Թագուհու ճառը հաշուում է անցեալ դէպքերը և խաղաղութիւնը հաստատ է համարում։

ԲՈՒԽԱՐԵՍ, 4/16 օգոստոսի։ Բնասարաբայի մի մասի Ռուսաստանին յանձնելը կը կատարվի օգոստոսի վերջին օրերում։

ՎԻԵՆԱ, 4/16 օգոստոսի։ «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է հետեւեալը։ «Ռուսաց զինաւոր բանակը յայտնեց, որ 20,000 ձիաներ են ծախվում հասարակական աճուրդով։ Ռուսաստանի և Բ. Դրան մէջ ծագել են զիպլօմաթիական նոր դժուարութիւններ, որոնք սպառնում են ուշացնել զվարդիայի վերադարձը և ռուսաց զօրքերի Կ. Պոլսի շրջականներից յետ քաշվելը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 օգոստոսի։ Գեներալ Մեզենցիվի սպանողը դեռ գտնված չէ։

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ինչ յանձնված լինելով ԵՊՈՒ- ԼԻՍԻ ԵՐԿՍԵՐ ԴՊՐՈՅ- ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԺԵ- ՊԵՏՆԵՐ վարձել ինդրում եմ ցանկացողներին պայմանների մա- սին խօսելու դիմել «ՄՇԱԿ» խմբագրատանը, իսկ օտարաբաղա- քացիք կարող են իրանց ցանկու- թիւնը յայտնել նամակով: Ըն- յարմար համարվածներին չի պա- տասխանվի:

8. Մէլքե-Յակոբեանց

Օգոստոսի կէսից լոյս կը տեսնեն Ս. ՄԱՆ- ԻԿՆԻԱՆԻ հետեւեալ նոր աշխատասիրութիւն- ները՝

- 1) Ընթերցարան հայերէն լեզուի «ՆԱՀԱՊԵ- ՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, երրորդ տարվայ յոթսորորդ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՆ» անունով:
 - 2) «ՀԱՄԱՐՈՅ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ»:
- Ցանկացողները օտանալ յիշեալ դրերը իր քանակին կարող են դիմել «ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ» կամ Զար. Գրգորեանի գրավաճառանոցը:

2-3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իր ներկայութեամբ ներկայ օգոստոսի 12-ին նշանակած է անուրդ առանց կրկնաճուրղի 55 քառակուսի քաղաքային դա- տարկ հող ծախելու համար, որ գտնվում է Թի- ֆլիսի 2-րդ բաժնի 15-րդ մասում:

1-2

«ՃՈՐՏՈՒԹԵԱՆ ԻՐԱՌԻՆՔԸ ՎԱՐՁԱՆՈՒՄ» Գուստավ Բալանթարեանցին, ուսերէն լե- ղուով, ծախվում է Բերնշտամի գրավաճա- րանոցում, Թիֆլիսում, Գոյովիսիի պրօս- պեկտի վրա: Գինն է 75 կոպ. փոստի ծախ- սով 80 կոպեկ:

1-6

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. ԵՏՈՒՇԵՎՍԿԻ. — ժողովածու թուրքական խնդիրների յարմարեցրած հայ ուսումնարանների համար 1 մաս — ամբողջ թիւեր, 3-րդ տպագրութիւն հիմնական փոփոխութիւն- ներով և յաւելումներով: փոխադրութիւն Մարտ. Սիմէօնեանց: 1878 թ. զինն է հարող ամսանի համար 50 փ. գումարով — 45 փ.:
2. ՌԻՍՈՒՄԻ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒԻ առաջին տարի — գրել և կարգալ աշխատասիրութիւն Դ. Աղայեանցի, զինն է 15 փ.:
3. ՌԻՍՈՒՄԻ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒԻ Երկրորդ և ուսուցիչների համար — Ղազար. Աղայեանցի, զինն է 20 փ.:

Ի. ՄԱ. ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻ ՄԱՆԻԱՌՐ ԲԵԱՎԱՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԸ:

(Թիֆլիս, Սաղապեա փողոց, տուն Պ. Ի. Շաղինովի, № 34)

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է Բէալական ուսումնարան, զինուորական գիմնազիա և միւս ուսումնարան- ներ մանկու համար:

Ուսումնարանի կուրսը համապատասխան է պետական Բէալական ուսումնարանների կուր- սին:

Ներկայ ուսումնական տարվայ սկզբին բաց- վում է 4-րդ դասարանը:

Ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 21-ից, իսկ ուսումը կը սկսվի սեպ- տեմբերի 1-ին:

Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ամեն օր մասնաւոր Բէալական ուսումնարանում:

1-3

Առանձնապէս ՊԱՐԱՊՈՒՄ ԵՄ աշակերտներ պատրաստելով բոլոր ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄ- ՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Պատրաստում եմ ԵՐ- ՐՈՒՄ կարգի կամուր մտնողներին:

Նախընտրեալ փողոց Վեցելի գործարանին կից, ՏՈՒՆ ԳՈՒՄԻԼԵՎՍԿՈՒ, № 1.

1-5

ՄՈՋԳՈՎԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՐ ՌՈՂՈՒՄՆԱ- ՐԱՆՆԵՐՈՒՄ հարկաւոր են մի ՌԻՍՈՒՄՆԵՐ Հա- յոց լեզուի և մի ՎԱՐՈՒՄՆԵՐ Նոյն տեղի ՔԱՂԱՔԱՑԻՆ Երկուսն ուսումնարանների հա- մար հարկաւոր է մի ուսուցիչ ՀԱՅՈՑ ԼԵ- ՁՈՒԻ տարեկան 600 ռուբլ. ուժերով, շաբա- թական 17 դաս: Ցանկացողները կարող են մանրամասն պայմաններ խմանալ «ՆԱՀԱՊԵ- ՏԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ» ԱՐՄԻՆԻՈՒ ԳԱՂԱՔԱՑՈՒՄ:

Գարբիէլ քահանայ Տարփայեան

1-4

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԹՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆԻՍ

ՀԱՏ ԷՃԱՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ

ԽՆՆՈՒԹՆԵՐԸ

Կովկասի ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԸ յայտնում է հետեւեալ ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ մասնէ ցանկացողները պէտք է խնդրէ ներկայացնեն բժշկական մասի կա- ռավարչի անունով (Սաղապեա փողոց, իշխան Անդրեփիլովի տուն):

Մանկաբարձական արհեստի բարձր կուրսեր մտնելու համար, որ իրաւունք է տալիս ստա- նալ մանկաբարձի վկայական և մտնել պետական ծառայութիւն իբրև քաղաքական և գաւառա- կան մանկաբարձներ, որ տալիս է բժշկական կանոնադրութեան յօդ. 541 մէջ յիշված արու- նուութիւնները, պահանջվում է գիտնալ ուսուցող լեզուից ուղիղ կարգալ և գրել պատմել գրաւոր և բերանացի կարգաւոր, թուականութեան չորս գործողութիւնները (չուսարուստ, հանում, բազմապատկում, և բաժանում), անունական թուեր և հասկացողութիւն կո- տորակները: Իսկ նրանցից, որոնք կը ցանկանան մտնել ստորին կուրսերը, որոնք աւարտելուց յետոյ կը ստանան գիւղական մանկաբարձների վկայականներ, պահանջվում է ուսերէնից կարգալ և գրել և բերանացի պատմել կարգաւոր:

Ինչպէս առաջինները նոյնպէս և վերջինները պէտք է 16 տարեկանից փոքր և 30 տա- րեկանից մեծ չը լինեն:

Խնդրելի հետ պէտք է լինեն մարտիական և ծառայելու կամ ամուսնի (եթէ մանուրը ամուսնացած է) թղթաւորութեան վկայականները:

Թաղապարամբ հետեւեալն է. երթեւեկ աշակերտութեան տարեկան 40 ռուբլ. իսկ դի- շերթիւնները, որոնց բոլոր հոգները ուսումնարանը կը տանի, 240 ռուբլ. և միանուագ 60 ռուբլ. սկզբնական ծախսերի համար:

Ցարեկան թղթապարամբ մտնում է սկզբից և չէ վերադարձվում, եթէ որ և է պատ- ճառով աշակերտութեան ուսումնական տարվայ ընթացքում թողնէ ուսումնարանը:

Ուսման կուրսը երկու տարվայ է:

Մանրամասն տեղեկութիւնները կարելի է ստանալ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ՌԻ- ՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ:

1-6

КОНТОРА ГАЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМЪ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ ОТЪ 9 ЧАСОВЪ УТРА ДО 2 ЧАСОВЪ ПОПОЛУДНИ

ԱՐԹՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆԻՍԻ ԳՐԱՆԵՆԵԱԿԸ

ԲԱՑ ԷՃԱՆՈՒ ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ 9 Ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԿԻՍ օրերից:

ՕԳՈՍՏՈՍԻ 8.

Տ Ե Ղ Ե Վ Ա Յ Ո Յ Ց

ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՅ		Ր.	Կ.	ՀԵՌԱԿԻՐ	ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ՌՈՂԻ	ՓՈՍՏ	ԲԺՇԿԱԼՈՑ	«ՄՇԱԿ» ՊԱՅԱՍԽԱՆՆԵՐ
(Օգոստոսի 1-ին)		Ր.	Կ.					
Ոսկին (պոլոսեղիւղ)	8	—	—	Կովկասի և Ան- զրկովկասի քա-	Թիֆլիսից մինչև Փոթի (հասնապարհորդների գնացքը) 9 ժամին 21 ժամէ առաւօտեան:	Ամեն տեսակ թէ նա- մակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7:	Հիւանդների ընդունելու- թիւնը 8-ից մինչև 10 ժամը յունիսի 1-ը մինչև սեպ- տեմբերի 1-ը:	—
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1540	—	—	ղաքները	Մինչև Միխայիլով (խաւն գնացքը) երկուշիւս 5 ժամ. 18 ժամէ:	Երկուշիւս արծ. վէրմի- չէվ և Գորայիլի ներքին հիւանդութիւններ, Գուշա- բեանց վերաբուժական և կանանց հիւանդութիւն- ների ձեռագիրտական մասը 10-ից մինչև 11 ժամ:	—	—
Հին 20 փ. 72 պր. 1000 "	1278	1	—	Ռուսաստան	Փոթի	Ուրուստան և Նի- բոպայի բոլոր երկիր- ները նամակը արժէ	Կանանց և երեխաների և մանկաբարձութեան	—
Վերջինի 50/100 առաջի փո- խաւութեան տոմ. 100 "	233	2	—	Աւստրիա	Միխայիլով.	Ամէրիկա	Շաբաթ. վէրմիչէվ ներ- քին հիւանդութիւններ	—
Ներքինը 50/100 վերջինի "	235	3	—	Անգլիա	Փոթի	Պարսկաստան	Շաբաթ. վէրմիչէվ ներ- քին հիւանդութիւններ	—
Մարտի կուրսը 267 "	100	4	—	Գերմանիա	Միխայիլով.	Հնդկաստան	Շաբաթ. վէրմիչէվ աշ- քի հիւանդութիւններ:	—
Նոյնի կուրսը Օղեսայի վրա	9	2	88	Ֆրանսիա	Փոթի	Նիդերլանդներ	—	—
Վենայի կուրսը ամէ 112 դր.	100	3	75					—
Կուրսերի բարձր.	5	—	—					—
Աւստրական բանկի ալ- ցիան 200 մ.	315	—	—					—
Փոթի Թիֆլիսեան երկա- թուղու ակցիան 125 մ.	101	—	—					—
Շաբաթը բացվում	7	40	—					—
" միւս տեսակը	7	25	—					—
" շաբաթաւոր	5	70	—					—
" տրանզիտը	6	—	—					—
" մաքսը վճարած	11	—	—					—
Բաւարացի երևանու Ա- մերիկայի սերմից.	8	20	—					—
Միւս տեսակը հին սերմից.	7	—	—					—
Բուրգը թույլ	8	—	—					—
Թարաքամի	4	20	—					—
Ալիւր Երթազալու	1	80	—					—
" երևանի.	—	—	—					—
Գարին.	1	30	—					—
Մոմը քնածաղիկ (creap.)	12	60	—					—
Մեւաքաւ Նուկալայ	180	—	—					—
Կախեթ ունը.	100	—	—					—
Կոկոնը Նուկալայ (բոմ.)	42	—	—					—
Ֆրեդոնը (լաւը) Աղու- եան	50	—	—					—
Կոֆէն մօկօի.	25	—	—					—
" փկանի	20	—	—					—
" մարմինիօրինը	16	—	—					—
				ԱՆԴՐԻՆՈՎՎԱՍԵԱՆ ՄԱՆ- ԿԱՐԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՅ				
				(Վէրայի վրա № 38)				
				Ծննդկանների ընդու- նելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամա- նակ, օրը 50 կողէկ վար- ձով իսկ չքաւորներին աւ- վարձ: Աւանձին սենեակ- ներում ամիսը 30 — 50 րուբլ.: Կանանց հի- ւանդութիւնները մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ., իսկ մանաւոր սե- նեակներում 30 րուբլ ամ- սակաւ:				
				Երթեկ և հիւանդ կա- նանց և երեխաների ըն- դունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9 1/2 մինչև 11 ժամ առաւօ- տեան: Բժշկապետ Ա. ա- նով.				
				Թիֆլիսից 9. 21 5. 18				
				Փոթի 11. 58 9. 43				
				Միխայիլով. 1. 29 11. 57				
				Րիօն 6. 47				
				Փոթի 9. 40				
				Փոթի ից 9. 13 5. 18				
				Րիօն 12. 13				
				Միխայիլով. 5. 39 1. 37				
				Փոթի 7. 5 4. 3				
				Թիֆլիս. 9. 31 7. 56				
				Թիֆլիսի գալիս է առաջին դը- նացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.				
				Տեղերի գինը Թիֆլիսից				
				Միխայիլով. 9. 0 6. 8 3. 8				
				Փոթի 3. 20 2. 40 1. 33				
				Մուրամ. 5. 22 3. 92 2. 18				
				Րիօն 9. 6. 75 3. 75				
				Փոթի 13. 1 9. 75 5. 42				
				ՆԱՄԻԿԱՆԵՐ				
				Բաց նամակը արժէ 4				
				Ռուսաստան և Նի- բոպայի բոլոր երկիր- ները նամակը արժէ				
				Ամէրիկա 8				
				Պարսկաստան 8				
				Հնդկաստան 70				
				Նիդերլանդներ 27				